


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուրկարիոյ համար  
Տարեկան Ծրք 10  
Վեցամսեայ » 5  
ԿԱՆԽԻԿ

20  
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Սրբապետական  
Տարեկան Ծրք 12  
Վեցամսեայ » 6  
ԿԱՆԽԻԿ

20  
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրահարակուի ճաքար օրերը : Ծա-  
նոցման տոյր 10 Սանդիմ : Երկու քիւ ա-  
նաջ հրահարակուած քերքը 40 Սանդիմ :  
Չհրահարակուած գրութիւնը եւ յսրմիւր :

Հասցե  
DIRAN PAPAZIAN  
RUE DRAGOMAN K. STEPAN  
(BULGARIE) VABNA

ԱԶԳԱՅԻՆ

—0—

« Ռոմուլանի մէջ գեղերոյ Մայր—ե-  
կեղեցւոյ Տ . Աթանաս քահանային համար  
որոշուած է Պատրիարքարանի կողմէ գրել  
տեղեւոյ Տ . Խաչատուր Աւագ քահանային թէ  
յիշեալը ո՛ր և է պաշտօնով մեկնած չէ եւ  
առանց Պատրիարքարանի գիտութեան ու հը-  
րամանին չի կրնար պաշտօնավարել ո՛ր որ  
ալ գտնուի : »

Բիւզանդիոն Թիւ 332

« Բիւզանդիոն »-ի այս լուրը իր պար-  
զութեան մէջ, ա՛յնքան կարեւոր ու իմաս-  
տալից է, որ կարժէ պահ մը կանգ առնել  
անոր վրայ :

Մեր ընթերցողներէն շատեր կը ճանչ-  
նան արգէն այս քահանան, անձամբ կամ  
անունով, որ քահանայական սրբազան կոչու-  
մէն վատ ուրիշ կոչումներ ալ ունի իր մէջ,  
բայց անոր կենսամարտական մանրամասնու-  
թեանց տեղեակ չեն ՚ի հարկէ . քանի մը  
համառօտ գիծերով պարզենք ուրեմն իր անձ-  
եալը, զոր մեզ հաղորդած են իրազեկ անձեր :

Այս քահանան, կրօնական սքեմին տակ  
սքողուած, ամբարտաւանութեան եւ արծա-  
թապաշտութեան իսկական տիպար մը եղած  
է ՚ի Պոլիս, որ չէ խղճացած իր հոգեւոր եղ-

բայներուն հողաթափի յարձակումներ ընել,  
եկեղեցւոյն մէջ, նոյն իսկ Ս . Պատարագի  
տունն : Իբ յատկանիշն եղած է միշտ իր  
անձը հոգալ ու իր ծուխերը շահագոր-  
ծել ամենագծուած միջոցներով : Յանդգնած է  
նաեւ իր մայրը, հարազատ մայրը տունէն  
զուրս վաճառել ու երկար տարիներ ձգել  
զայն ամենայեւոյն թշուառութեան ու չքա-  
ւորութեան առարկայ : Վերջին ծանօթ դէպ-  
քերուն իր սիրական յատկութիւններուն  
միացուցած է նաեւ ստոր դաւաճանութիւն,  
ու այն ձեռքը, որ Ս . Հաղորդութեան մա-  
տուցումովը նուիրաբործուած պէտք է ըլ-  
լար, առանց խղճահարութեան մատնած է  
կարգ մը երիտասարդներ, զանոնք ստոյգ  
մահուան մը ճիրաններուն մատնելով : Ու-  
տիկանութեան նախարարին մօտ, Պատրիար-  
քարանի գաղտնիքները հաղորդող Տէր Բսկի  
քահանային հարազատ ընկերն ու խորհրդա-  
կանը եղած է երկար տունն ու աշատ մեծաք  
ունեցած է նախարարին տպարանքը :

Իր շահատակութիւնները աւազրու-  
թենէ հեռու մնացած չեն սակայն, իր շար-  
ժումները միշտ զիտուած ու անդեկազրուած  
են, ինչպէս բոլոր իր նմաններունը :

Անցեալ տարի Սեպտեմբերին Պոլիսէն  
վաճառ գաղթած է քահանայական տարա-  
զով, բան մը քր անկարելի էր նոյն թուա-  
կանին . ոստիկանութեան գաղտնի լրտեսի մը  
պէս, եկած օրն իսկ սպրդած է իր վաղա-



ծանօթ բարեկամներուն մէջ, ու ինքզինքը ցոյց տուած է Պոլսական վերջին գէպերու զոհ մը. բայց տեղւոյս Ս. Սարգիս եկեղեցւոյ շրջափակին մէջ, ժողովրդեան ստուար բազմութեան մը առջև իրազեկ անձերու կողմէ իր դիմակը վար առնուած ու ձեռնարկուած է Վիտին աքսորել զայն, բայց վերջին պահուն Ռուսճուգ զրկել յարմար դատուած է:

Հոն երկար տտնն աշխատած է ինքզինքը արդարացնել ու եկեղեցիի սեմէն ներս սպրդիլ, բայց տեղացի ողջամիտ ազգայիններ երևս դարձուցած են իրմէ և նոյն իսկ ըստիպած որ հեռանայ անկէ:

Իբր վարպետորդի մարդ, չէ յուսահատած սակայն իր վարկը վերահաստատելու աշխատելէ, հին ու մին լաթեր հագած ու նոյն իսկ իր տան կարասիներէն մէկ քանին ծախու հանած է իբր թէ հաց ճարելու համար, յետոյ սրճեփութեան սկսած է առանց քաշուելու, բայց չէ կոցած խաբել ժողովուրդը. իսկ հիմա ի՞նչ կընէ, Ռուսմանիոյ Պոթուլան քաղաքին մէջ ապաստանած, սկսած է անշուշտ անօրինակ շահատուութիւններու, որոնք աշխարհագրանի մը իսկ չպիտի ներուէին բնաւ: Տեղւոյն Աւագ երէց քահանան, ինչպէս կը կարդանք «Բիւզանդիոնի» մէջ, տեղեկագրած է Պատրիարքարան յիշեալին արարքները և կրօն. ժողովն ալ վերոգրեալ պատասխանը գրած է Աւագերէց հօր:

Արդ, այս քահանան, որ չքաւորութեան պատրուակով սրճեփութիւն իսկ ընելու յանձնառու եղած էր, հիմակ ո՛ւրիշ կը գտնէ այսքան առատ զրամ իր շույլ կեանքին ու կառքին յատկացնելու համար: Ստիկանութեան պաշտօնատունը ողջ ըլլայ:

Արմենիա թերթը, իր տնցեալ տարուան թերթերէն մէկով բացորոշապէս գրելէ յետոյ թէ տէր Աթանաս անուն քաւիքահանայ մը սպրդած է Պուլկարիոյ հողը, ըզգուշացուցած է ժողովուրդը չի խաբուիլ այդ մարդուն խօսքերէն:

Մենք ալ այժմ պարտք կը համարինք

զգուշացնել մեր արեւակից եղբայները, որ ո՛ր և է կերպով չի հրապուրուին անոր խօսքերէն ու ինքզինքին չի մատնեն աւելի վատեղաւոր կացութեան մը:

—o—

Նոր պատրաստուած տեղեկագրի մը նայելով, առ այժմ տեղւոյս հիւանդանոցին մէջ 281 երկսեռ չքաւորներ կը բնակին:

—o—

Բարեսէր անձ մը Ազ քատախնամին շնորհած է մէկ պարկ բրինձ ու մէկ պարկ լուբիա, հիւանդանոցի մէջ պատսպարեալ ազբատաց բաժնելու համար:

—o—

Վաղը (կիրակի) ուրիշ բարեսէր ազգայնոյ մը կողմէ հաց և միս պիտի բաշխուի հիւանդանոցի պատսպարելոց:

—o—

Ռուսճուգէն եկած մասնաւոր նամակներ Թեմ. Տօթ. Յ. Բաշանանի մասին գովեստիւք կը խօսին: Տօթնոը իր օրինակելի անշահախնդրութեամբը ու աղքատներու մասին ըրած զոհողութիւններովը ամենուն սիրելի ու համակրելի ըլլալէ վատ, այսօր ամբողջ Հայ տուններուն բժիշկը եղած է. ամեն շարաթ որոշեալ օր մը տեղւոյն Ազգ. վարժարանը այցելելով, իր խնամօքը կարօտ աշակերտները կը դարձանէ և առողջապահական խրատներ կուտայ ուսանողաց:

Կը լսենք թէ յառաջիկայ Ս. Յակոբի կիրակի գիշերը բռնի ամուսնութիւն մը տեղի պիտի ունենայ. այժմէն կը հրաւիրենք Պատկազիր Տէր Հայրերը, որպէս զի հարս ըլլալու պատրաստուող աղջիկները նախապէս լաւ մը խոստովանեն:



## ՀԱՐՄՆԻՔԻ ՄԷՋ ԲԱՆՏԱՐԱՆԻԻՆ

— Միւսիւ ԲՕԼ, կուռնելիոս աղան աս շարժու կը կարգուի կոր :

— Իրա՞ն կըսես :

— Այո՛, անունին պէս կիւրիւթիւլիւ հարսնիք մը պիտի ընէ եղբր . երթա՞նք :

— Բայց հրաւիրուած չենք :

— Հրաւերը ի՞նչ է . սանֆասօն ներս կը մտնենք :

— Իմ գիտցածս, առանց հրաւերի, պէքճին ու ժամկոչը կերթան :

— Ադ ըսածդ Պոլսոյ համար է, իսկ վառնարի մէջ առանց հրաւերի հարսնիք երթալը ամօթ չէ : Միւսիւ Լեոնն ալ հետ կ'առնենք :

— Անպատճառ առնելու ենք որքատրիին տիրիժէ ընէ ու չի գիտցած մէկ բանի ֆիկուռաներնիս մեղի սովբեցնէ :

Երկու միւսիւները այս որոշումը տալէ ետքը Մ. Լեոնին լուր կը զրկեն որ Եփրատի սրճարանը զիրենք գտնէ, ուր անկէ առաջ երթալով դէմ առ դէմ նստած կ'սկսին նարտ խաղալ : Քատրիլ խաղալու հեշտանքով գինովցած այս պարոնները նարտին ասացուածները քատրիլի եղանակով կ'ըսէին :

— Թրինլանլա հէփ եէկ :

— Թազէ տիր կէվրէկ :

— Պալտանէ՛, ճիհար ու սէ :

— Սէվէրլէր կիւզէյի կէնճ իսէ :

— Թարարիրարա թուռ տըմէն :

— Մարս եղար Կարպիս, տիւշէչի դըռնէն :

Հարկ չէ ըսել թէ ասոնք իրենց աղմուկովը սրճարանին խուլ շշուկը կը խեղդէին :

Կէս ժամէն Միւսիւ Լեոնն սրճարան կը մտնէր :

— Ադ ի՞նչ է . նա՞րտ կը խաղաք թէ քատրիլ :

— Երկուքն ալ :

— Եղբայր ո՞ւր մնացիր, ժամը Ծն է :

— Հայտէ երթանք :

Ու երեք պարոնները թւթեի հարսնիքին տունը դացին : Հաղիւ թէ սենեակէն ներս մտած էին, սկսան իրարու ըստալ :

— Ծո՛, օրիորդ Էօթէնին հոս է եղբր, ես անիկա կ'առնեմ :

— Ես ալ անկիւնի ծեր կնկան քովը նստող գիրուկ օրիորդին անկաժէ կըլլամ :

— Իմ աչքս, դրանը մօտ կեցող օրիորդին վրայ է :

Տանտիկինը այս երեք ինքնակոչները տեսնելուն պէս՝ փեսին մօտեցած կը հարցնէ :

— Ո՞վ են ասոնք :

— Չեմ ճանչնար :

— Որո՞ն կողմէ հրաւիրուած են :

— Չեմ գիտեր . կնքահօրս հարցուր :

— Կնքահար աղա, ասոնք կը ճանչնաս :

— Առաջին անգամ է որ զիրենք կը տեսնեմ :

— Ուրեմն, առնց ներկայութենէն ես չեմ ախորժիր, աչուքնուն չեմ հանիր կոր, ասը աղջիկները քիչ մը գինով են, չեղլան փորձանք մը բերեն, ըսելով օրիորդները սենեակ մը կը լեցնէ ու դուռը կը կղպէ :

Ասդին մեր միւսիւները չի գիտնալով գլխունուն եկածը՝ կը պատրաստուէին խաղալու . բայց տեսնելով որ վարժուհիի կոչում ունեցող գինով օրիորդ մը սենեակին մէջտեղը կեցած կը ցատկոտէր ու «աֆէրիմ» կարպիս, մատնիս զրկեր էր, ըսելով մատանին կը պագնէր, կը սկսին անոր հետ զբօսնուլ :

Տանտիրուհին այդ գինով աղջիկն ալ կը տանի տեղ մը կը պահէ, որով պարոնները եղած տեղերնին կը մնան :


Երբ պաշալոյսը կը ծագի, տանտիրուհին ձեռքը աւել մը տռած կը սկսի աւելել, ինքնակոչ պարոնները քըշքըշ ըլլալէ ետքը՝ բանտին դուռը բացուելով՝ անօթի հաւերու պէս օրիորդը ալ դուրս կը նետուին, իրենց հետ բերելով նաեւ երիտասարդ մը՝ որ սըխալմամբ ներսը մնացած էր :

ԴԻՏՏՈՂ



## ԽԱՐՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊՔ Ի Կ. ՊՈԼԻՍ)



ԳԼՈՒԽ Բ.

ԱՌԱՋԱՐԿ

Հարաւթ իրիկուն ուշ առնե՛ր Միհրան աղաի առած նամակը, որ Տրապիզոնէն հոգար տեղացի բարեկամ վաճառականի մը կողմէ, կիմացներ թէ նոյն քաղաքին մէջ Գամիկ Թէրլէրեան անուն Եւաղիմաի վաճառականը 1200 ոսկի բացով սնանկացած էր։ Միհրան աղա նոյն վաճառատունէն կը պահանջէր 125 ոսկի, որուն վճարելու պայմանաժամը նոյն շաբթուն կը լմնար. ու արդէն նոյն գումարը ձեռք անցունելուն կը սպասէր անհամբեր, վասն զի ինքն ալ ի վիճակէն Թիւրքիսի գործարանի մը վճարելի 225 ոսկինոց պօնօ մը ունէր, որուն պայմանաժամը նոյն շաբթուան Ուրբաթ օրը կը լրանար։

Միհրան աղա կայծակնահար եղաւ այս անակնկալ նամակէն, որ իր ամբողջ հաշիւները տակնուվրայ կընէր և ունեցած գիրքը կը վտանգէր։ Արդու հարիւր քսանըհինգ ոսկի պարտքին 120ը թէեւ պարտաստ, բայց մնացորդ 105 ոսկին ո՛ւսկից, ծարելու էր։ 2էր կրնար նեղը մնացորդ կարգ մը վաճառականաց ըրածին պէս 31 կամ 61 օրէն վճարելի մէկ երկու պօնօ հրապարակ հանելով իր նեղութիւնը անցունել, որովհետեւ բանի մը անգամներ տկամայ, սնանկութիւն հրատարակած ըլլալէն համոզուած էր որ Պոլսոյ հրապարակին վրայ չպիտի բռնուէր իր ստորագրութիւնը։

Կրնայ ըսուիլ թէ խեղճ մարդը նոյն շաբաթ գիշեր մտատանջութենէն մինչեւ լոյս քնացած չէր, ու առանց տանը մէջ գտնուողներուն բան մը յայտնելու, կիրակի առաւ առաջին շոգենաւով փութաց Իսկիւտար

երթալով կացութիւնը իր հաւատարիմ գրադրին, Պատրիկին պարզելու։

Տեղն է ըսել որ Պատրիկ խիստ պարկեշտ ու խորամանկ տղայ մ'էր՝ և իր տէրը շատ կը սիրէր. ինքը ազբաւոր մը զաւակ ըլլալով, իր ուշիմութեանը համար ժամանակաւ Միհրան աղաի պաշտպանութեամբ Մայր—վարժարանը դրուած, ուր ուսմունքը կատարելագործելէ ետքը անոր վաճառատունը գրադրի միանգամայն խորհրդականի պաշտօնին կոչուած էր, և ամսական առած 5 ոսկիով իւր մայրը ու քոյրը հանգիստ կ'ապրեցնէր։

Արեւ այս երիտասարդը Գամիկ թէրլէրեանի սնանկացած ըլլալը իր ախորժմէն լսեց՝ վայկեան մը խռովեցաւ, բայց ինքզինքը ժողուելով՝ սկսաւ սիրտ տալ անոր ու գըտնուած այս նեղ կացութենէն աղատուելիք ճամբայ մը գիտնալը իմացուց։

Միհրան աղա քանիցս փորձով հաստատած ըլլալով Պատրիկի ճարպիկութիւնը ու կարողութիւնը, այս անգամ ալ անոր շնորհիւ նոյն նեղ կացութենէն աղատուելուն բոլորովին վստահ՝ գոհ սրտով նոյն իրիկունը իր տունը վերադարձաւ, ուրկէ առաւօտուն տխրութեամբ մեկնած էր։

Հետեւեալ առաւօտ Պատրիկ առաջին շոգենաւով շուկայ իջած իրենց վաճառատան առջեւը աթոռի մը վրայ նստած կը ըսպասէր։

Մէկ ժամէն Աստիւր աղան ալ խանութը հասած, «Զգէօրծս ձեռաց մերոց ուղիդ արա՛ ի մեկ տէր», ըսելով՝ Գանիկին հետ լիեղերը կը բանար։

Պատրիկ շուտով թրեա զայն ողջունելով, — Աստիւր աղա, քեզի հետ քիչ մը առանձինն տեսնուի՞լ կ'ուզեմ — ըսաւ։

— Եւ առայականա ալ պիլմուխապէլէ՛ աղաիս ի՞ճաւէ մի տի անիւմ։

— Ուրեմն սրճարան մը երթանք նըստիւք։

— Իէնի—ճամիի սըրա խէյֆէներուն իջինձին մինասիպ է։

— Հատ աղէկ, հոն կ'երթանք։



Ու հինգ վայրկեան ետքը այս երկու-  
քը վերոյիշեալ սրճարանին մէկ անշուք ան-  
կիւնը քաշուած՝ ցած աթոռակներու վրայ  
նստած կ'երեւէին :

Պատրիկ, աշխարհի մէջ մարդուս իր  
նմանիին օգտակար հանգիստանալու ունեցած  
աւագ պարտականութիւնը յիշեցնելով, Տրա-  
պիզոնէ եկած նամակն Աստիւր աղաին կը  
ցուցնէր ու կ'առաջարկէր անոր 100 ոսկիի  
փոխատուութիւն մը ընել իր տիրոջ, \$1 օ-  
րէն վճարելի. կը յաւելցնէր նաեւ որ, եթէ  
Ըստիւր աղան սոյն փոխատուութիւնը չընէր,  
Միհրան աղան պիտի ստիպուէր ակամայ տը-  
նանկութիւն հրատարակել, որ այս անգամ  
ամբողջ ընտանիքին կործանմանը պատճառ  
պիտի ըլլար : Պատրիկ բոլոր իր ճարտասա-  
նութեամբը բարի զրոյցնութեան կոչում  
կընէր :

Այս առաջարկն ընդունելը Աստիւր  
աղաին գործին աղէկ կուգար : ասով իրեն հա-  
մար հարթուած կը կարծէր այն կարգ մը  
ենթադրական դժուարութիւնները, որոնք  
Բուրմինէի ձեռքը խնդրելու ատեն թերեւս  
պատահէին : Եթէ այս առաջարկը մերժէր՝  
Բուրմինէի խնդիրը ջուրը պիտի իյնար, վա-  
սըն պի հրապարակին վրայ հանած անունին  
հակառակ հարուստ մէկը եղած չըլլալուն  
Միհրան աղայենք պիտի համոզուէին ու աղ-  
ջիկին չպիտի տային իրեն պէս այրիի մը :  
Այս ամենը վայրկեանի մը մէջ իր մտքին  
առջեւ ներկայացան . որոշած էր սիրով այդ  
100 ոսկիի փոխատուութիւնն ընելու : Բայց  
գործը յայտնի չընելով ու ընդհակառակն  
քիչ մը դժկամակովի կերպարանք տանելով՝  
բանի մը վայրկեան մտածելէ ետքը պատաս-  
խանց :

— Պատկեր աղա, մահուտ իլթիգամճի  
խալիտ պէկին իմ 25 բնուան մօտ մաթլու-  
պաթիս զիմէթն անցուցած ու մինչօր աս  
թարիխս փարա մի թէպիմաթ չունենալուն  
սէպէպովը հէր իշտար ուր ծառայականս  
փոխ—փարա տալը թէօվպէ արած եիմ իսէ  
թը մեր Միհրան աղան խաթըրին պինսէն

բան մի կանինք : Ատ մէպլաղը երբ պէտ-  
քաւորական է ձեղի :

— Այս շաբթու, ուրբաթ օրը :

— Միհրան աղան Փայիզը վրան զամմ  
անելով 105 նիրայի էմրէ մուհարրէր ալթմըշ  
պիր կիւն վատելի սէնէտ մի տալու է ծա-  
ռայականիս :

— Շատ աղէկ :

— Անճախ, ծառայականս ալ ձեր վա-  
սէթայով Միհրան աղային անելիք թէքլի-  
ֆաթ մի խնիմ :

— Ի՞նչպէս :

— Տի բնեմ : Խէյֆէճի, պիղէ պիրէր  
խէյֆէ տահա բիշիւր :

(Շուր.)

## ԽԱՐԵՍԱՌՈՒԲԵՍԱԿԱՆ

ՏԵՂԵՑԻ ԳԼՁԱԶԼԸՐ

Պիւլկարիոյ հայաշատ քաղաքներէ մէ-  
կուն ընթերցարանին երկու վարկները գիշեր  
ատեն փախցին մէջ կը խօսակցին եղբր այս-  
պէս :

— Ատենապետ՝ էֆէնտի, զա՞նկը Օ-  
գէաննարտա կէղիօրսըն քի պիր այտուն պէ-  
րի ընթերցարանա ուղրամայօրսըն :

— Նէ՞ տէմէք իստէյօրսըն, սէն պէնիմ  
ամիրիմ մի սին :

— Ամիրին տէյիլիմ թաա՝ սօյտուղու-  
մուն սէպէպի վար :

— Նէ՞ իմիշ սէպէպի :

— Նէ՞ օլաճաֆ, օտուն պիթտի, կա՞ղ  
պիթտի, փարա եօգ, կէլէն՝ բաթանորդլարը-  
մըզ գարանլըգտա՞մը օթուրաճաֆլար :

— Պէ գարտաշ, օրանը գահվէ տէյիլ  
քի օտուն եագալըմտա ըսընսըն, օգուճաղա  
կէլէնլէր տէ կիւնտիւղիւն կէլսինլէր, կաղ  
եագճաղա նէ՞ եէրի վար :

— Շիմսլյէ գտտար պէշլէ՞ մի եա-  
լընօր ըտըգ :

— Պէշլէ եալըմայօր ըտըգ ամա, ար-  
թըգ եալըմաղըզ :



— Էյի ամա, այլա տըր :

— Նէ՛ վար քի այլա օլտուն :

— Լաթիֆէյի պիր թարաֆ իտէլիմ, բաժանորդարտան փարա թօբլա՞նֆայօր մը :

— Քի՞մ թօբլալաճագ :

— Հաւաքիչիմիզ նէ՞ օլտուն :

— Հաւաքիչ քէօլէ կիթտի, պու կիւն-լէրտէ նուէր վէրէն տէ եօգ :

— Օ քէօվտէ իսէ, ընկալագիրլէրի Խ. է թէսլիմ էտէլիմ օ թօբլար :

— Թօբլար ամա քէնտիսի իչիւն թօբլար :

— Էյլէ տիր, մէրպա եւյիճինին պիր տէ օ, կէչէն սէնէ ընթերցարանտան քի-թապլարը կէօթիւրէնլէրտէն պիրի տէ օ տէյիլ մի :

— Պանա սօրարստան, քէք էյի էթտի-լէր քիթապլար թանգարանտա քիւֆլէնէ-ճէք իտի :

— Պէ գարտաշ, չիւրիւք իլիմն մը տըրլար քի քիւֆլէնսինլէր :

— Սէօզ իչիմիզտէ՞ եա ք պէնիմ կիպի օգուճագ պիլմէյէն իչիւն օ տէմէք տիր :

— Սէն գալգըպ բաժանորդարտան փարա թօբլամալըսլն :

— Նէ՞ սէյլէյօրսըն, եէնի կէլէն շան-թանլարը պրագաճալմ տա, հաւաքիչլիյէ՞ մի չըգաճաղըմ :

— Շու գրապահ նի՞չիւն կէլմէյօր :

— Ալէլին նէ՞ իարսըն, պօշունա գուն-տուրնսընը՞ մը էսկիթսին :

— Էյի ամա, թանգարանտա քիթապ գալմամըշ, պունլար նէրլէյէ կիթտիլէր :

— Հապա թէպտիլինէ :

— Էյ պու հալին սօնու նէ՞ օլաճագ :

— Ալէ քի գուլաղընտան աշտա սէյ-լէիմ. պունա տէրլէր Տէվէյէ գաղաղլըգ, պիղիմ կիպի օգուճագ եաղմաղա մէրազը օլմայըպ՝ եալընըզ պիր իտտա իչիւն ըն-թերցարանա վարիչ օլանլարտան նէ՛ պէքլէ-նիր իսէ՛ օ օլաճագ :

Բոժոժիկ — Խանի, ազ վագըլթտան պու ընթերցարան տա գարանաճագ :



Բժիշկ մը իրեն դիմող հիւանդի մը .

— Ո՞ր տեղդ կը ցաւի :

— Չեմ գիտեր միւսիւ տօքթօր, բայց հիւանդ եմ :

— Ի՞նչպէս կեանք կը վարես :

— Չիու պէս կաշխատէի, գայլի նման կուտէի, իրիկուններն ալ՝ խօսքս ամօթ, շան պէս յոգնած կը պառկէի :

— Ուրեմն սխալ էք եկեր, անասնա-բուժի մը դիմեցէք :

— օ —

Մկրտիչ աղան տաշի օր իր ութ տարե-կան տղուն հետ փողոցէ մը անցած պահուն, տղբատ մը կը տեսնէ որ չոր հացի կտոր մը կրծելով զբաղած էր, ու քթալով քսան սան-դիմ՝ ողորթութիւն կուտայ :

Տղան այս տեսնելուն՝ կը հարցնէ հօրը .

— Հայրիկ, ան մարդուն ինչու համար քսան սանդիմ՝ տուիր :

— Չի տեսա՞ր զաւակս, խեղճմարդը չոր հաց կուտէր կոր :

Հետեւեալ օրը ճաշի ատեն, հօրը բա-ցակայութեանը, աղան կը սկսի մինակ չոր հաց ուտել :

— Այդ ի՞նչ է զաւակս, կը գոչէ ժոյ-րիկը, ճաշի ատեն չոր հաց ուտելը նո՞ր հա-նեցիր :

— Մայրիկ, թէոր ինքզինքդ աս բանին վարժեցնես, հայրիկէս օրը քսան սանդիմ՝ կալ բեղի, ամա ինձմէ գիտցած մի ըլլար :

— օ —

Նասիպ աղա, կըսէր կին մը անցած գիշեր իւր տնուանոյն, վաղը գիշեր ալ ելլաս լոլիկ աս ատին տուն դաս նէ՛ դուռը չի պիտի բանամ :



— Տունը գլխունդ փլելի, ինձի տաճառդ էկ. ես ալ Եռվանին մէխանան կը պառկիմ, իրիկունները հոսա կուգամ կոր նէ՛ սանքի չօճուխներու խաթերը համար է չէ նէ աստար ճամբան ո՞ր խենդը կերթայ կուգայ:

— Ալըն կէօրին զաւակ կը մեղքընայ կոր. պիւթին գիշեր սէր սէֆիլ կը մնան կոր:

— Տաճառ ի՞նչ կուզես, աղէկ ա՛, չարֆաշ կը մեծնան կոր:

Միւսիւ Տ. Արամ իր նշանածը բարեկամներէն մէկուն ներկայացնելու ատեն կըսէր թէ.

— Ի՞նչպէս կը գտնէք, ընտրութեանս մէջ սխալած չեմ ես:

— Ա՛յ նշամի, կը պատասխանէ բարեկամը:

— Ի՞նչ, կեցիր հելէ մէյ մը թող իր թուալէթը տայ և ինքզինքը զարգարէ՛ այն ատենը նայէ ի՞նչպէս իրաւունք կուտաս իմ ճաշակիս.

Տիկին մը՝ բարեկամներէ մէկուն՝ կէս օրէն առաջ հիւր գացած ըլլալով սաստիկ կանօթենայ ու տան փոքրիկ տղուն կամացուկ մը կը հարցնէ.

— Չիր տունը ժամը բանի՞ն կը ճաշեն:

— Մայրիկս ըսաւ որ երբ դուք՝ մեկներ, մենք ալ սեղան պիտի նստինք:

Անցած օր Մուսալլաի սրճարաններէն մէկուն մէջ անձ մը՝ իրեն ծանօթ մեծատառ քայքայ շատ ազատ մարդուն հարցուց.

— Հաճի աղա, սիզին կիպի պիր միւթէ պէր զաթ շմէնտֆէր իլէ եօլճուլուղնտա նի՛չին իւչինճի սընըֆ վահօնտա օթուրսուն:

— Նէ՛ ետբայլմ գա՛րտաշ, տէօրաիւնճի սընըֆ վահօն եօֆ քի...

Լուծումն թիւ 8 Նկարհանուկի.

« Ոտքդ ծածկոցիդ համեմատ մեկնէ՞ր:  
Գ. Սահակեան »

ՃԱՇԱՐԱՆԻ ԱՐԵԳԱՆԻ

Մոյն ճաշարանը այս անգամ Տեար Գէորգ Փափաղեանի տնօրէնութեանը յանձնուած է, ուր ըստ առաջնոյն կը գտնուին համադամ կերակուրներ: Պատուարժան յաճախորդք խիստ գոհ պիտի մնան թէ կերակուրներէն եւ թէ գիներու անմրցելի ամանութենէն:


ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ

Մարտին Արսլան



4րդ Թաղ, թիւ 218

Գործիք կատարելագործեալ. Դին չափաւոր:





## Ա Ձ Դ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԴԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ


ՓՈԲԲԻՆ ՏՂԱՅՈՑ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առաջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով, կը պարունակէ մանկական զուարճալի երգեր ու քանի մը ողորմաւոր առակներ եւ կրնայ երախայներուն ծառայել նաեւ իբր ընթերցանութեան դիրք որուն պարունակութիւնը զբօսեցուցիչ եւ հրահանգիչ է միանգամայն անոնց համար:

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մաքուր եւ կազմը վայելուչ:

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւելեան ցոլարան,  
2րդ. թաղ, թիւ 1104:



ԴՈՒՇԱԿ

Ա. ՊԱՌԱՅԻ

Կամ Զուարճալի Բաղդադացի  
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով, դիմել մեր խմբագրութեան:

ՄԵՔԵՆԱՅԻՑ ԴՈՐԾԱՐԱՆ

եւ Զորարան

(ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲԱՆԶՈՒՅ

Վառնա 5րդ թաղ երկաղ թաղիս

Ամէն տեսակ մեքենաներու, շինութիւն և

նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛ պարզ ջուրով գործող մեքենաներ, նաեւ շոգեմակոյղներ. ջաղացքի վերաբերեալ ամէն տեսակ երկաթայ գործիքներ, դրամական գասաներ, շէնքերու յատուկ երկաթեղէններ, տեսակ տեսակ ջրհաններ եւայլն եւայլն կը պատրաստուին: Պատ. Յաճախորդդ միշտ գոհ մնացած են սոյն գործարանի շինութիւններէն:

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԵՍԻ

Այցեւորման, հասցէտոման. նամակագրութիւն, հրաւիրատոման, բարենիչ, տոմոակ, եւայլն եւայլն թէ՛ պարզ և թէ՛ ոսկեղօծեալ սէկ քանի գոյներով կը տպագրուին: Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Գին գոհացուցիչ: Դիմել Հայելիի խմբագրութեան:

Վարկեկական Տպագրութիւն

ԱՅՑԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր.ի կը տպագրուի և նոր տոմարին մէջ կը գտնուի Այցեւորման գործածութեան հրահանգը պարունակող տետրակ մը, որուն կողքին վրայ այցեւորման տիրոջանունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարի ծախք 30 սանդիմը յաւանարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմեաց նամակադրոշմ՝ կ'ընդունուի: Կանխիկ:

Огговоренъ редакторъ: Н. Драгулев

Imprimerie Orientale, Varna.